

**«Քաղաքացիական  
հասարակության դերը ԵՄ  
ինտեգրման գործընթացում.  
իրական ներգրավվածություն  
արդյունավետ մասնակցության  
միջոցով»**

**ԵՄ ինտեգրման գործընթացում  
հայաստանյան քաղաքացիական  
հասարակության  
կազմակերպությունների  
գործողությունների ամփոփ նկարագիր**



## **ԵՄ ինտեգրման գործընթացում հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործողությունների ամփոփ նկարագիր**

Գրքույկը մշակվել և պատրաստվել է հրատարակության Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՉՄԿ) կողմից: Այնտեղ ամփոփված են Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացի աջակցմանը միտված ծրագրեր, միջոցառումներ և գործողություններ, որոնք իրականացվում են հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Այս գրքույկը «Քաղաքացիական հասարակության դերը ԵՄ ինտեգրման գործընթացում. իրական ներգրավվածություն արդյունավետ մասնակցության միջոցով» հրատարակության մասն է, որը նմանօրինակ տեղեկատվություն է ներկայացնում նաև ուկրաինական և վրացական փորձի վերաբերյալ:

Գրքույկների այս շարքը պատրաստված է «Քաղաքացիական հասարակության դերը ԵՄ ինտեգրման գործընթացում. իրական ներգրավվածություն արդյունավետ մասնակցության միջոցով» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (Հայաստան)՝ վեց այլ գործընկեր կազմակերպությունների հետ, այդ թվում՝ չորսը Վիշեգրադյան երկրներից՝ Institute for Public Affairs (Սլովակիա), Policy Association for an Open Society (Չեխիա), European Center for Non-for-Profit Law (Յունգարիա), Association Integration and Development (Լեհաստան) և երկուսն Արևելյան գործընկերության երկրներից՝ Laboratory for Legislative Initiatives (Ուկրաինա) and Georgian Foundation for Strategic and International Studies (Վրաստան):

Ծրագիրն իրականացվում է Վիշեգրադյան հիմնադրամի ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն է դուրացնել եվրոպական ինտեգրման գործընթացը Արևելյան գործընկերության երկրներում: Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ կայքից՝ <http://visegradproject.ichd.org>:

Գրքույկում տեղ գտած տեսակետներն ու կարծիքները հեղինակներին են, և պատրադիր չէ, որ համընկնեն Վիշեգրադյան հիմնադրամի տեսակետներին:

**«Քաղաքացիական հասարակության դերը  
ԵՄ ինտեգրման գործընթացում. իրական  
ներգրավվածությունն արդյունավետ մասնակցության  
միջոցով»**

**ԵՄ ինտեգրման գործընթացում հայաստանյան  
քաղաքացիական հասարակության  
կազմակերպությունների գործողությունների ամփոփ  
նկարագիր**

Երևան 2013



# Բովանդակություն

Ու՛ր են տանում ճանապարհները .....	5
«Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» (2010-2013թթ.) .....	6
«Եվրոպական ինտեգրում ամենամյա համաժողով 2012. Համընդհանուր եվրոպական արժեքներ՝ կյանքն առանց խտրականության» .....	8
«Ոչ-պետական դերակատարների կարողությունների ուժեղացում՝ բարեփոխումների խթանման և հանրային հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագիր (2012-2015թթ.) .....	10
«Վրեւելյան գործընկերության երկրների և Եվրամիության միջև ազատ վիզային ռեժիմի ուղու հարթում» (2010-2011թթ.) .....	12
«Հավասար հնարավորություններ ազգային փոքրամասնությունների և խոցելի խմբերի մշակութային իրավունքների իրագործման համար. Հարստություն բազմազանության միջոցով» ծրագիր (2012-2014թթ.) .....	13
AEGEE-Երևան .....	15
Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն (2009-2011թթ.) .....	17
Միգրացիա և բարձրագույն կրթություն. հմտությունների և կարողությունների զարգացում (2011-2014 թթ.) .....	20
Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման և համադրելիության խթանումը (2010-2013 թթ.) .....	21
Ուղղել համալսարան-ձեռնարկություն համագործակցությունը դեպի կոմպետենցիաների վրա հիմնված վերապատրաստումներ Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում (2011-2014 թթ.) .....	22
Մարդու Իրավունքներ Եւ Ժողովրդավարացում» միջմասնագիտական տարծաշրջանային մագիստրոսական ծրագիր .....	24
ԵՄ ավտորուս .....	25
Եվրոպայի օր .....	26



## Ու՞ր են տանում ճանապարհները

Դեպի Եվրոպա ճանապարհը տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում: «Դառնանք Եվրոպա, որ ավելի բարեկեցիկ ապրենք» մոտեցումը, թերևս, տիրապետողը պիտի լինի եվրոջատագովների մոտ, որը եթե նույնիսկ չի բարձրաձայնվում, ապա առնվազն ներքուստ ենթադրվում է: Իսկ թե ինչպես պիտի այդ բարեկեցությունը մեր «գլխին թափվի» եվրոճանապարհի վերջում, թերևս, քչերս ենք մտորել:

Որ Եվրոպացի համարվելու համար առնվազն պետք է «ապրել» ինչպես եվրոպացի, թերևս քչերը կվիճարկեն: Մենք կարծես արդեն ընկալում ենք նաև, որ եվրոպացու պես ապրելու համար պետք է որդեգրենք խաղի եվրոպական կանոնները և հետևենք այդ կանոններին այնպես, ինչպես դա կաներ միջին վիճակագրական եվրոպացին: Փաստորեն եվրոճանապարհը երկադուր ճանապարհ է, որտեղ աղուրները միշտ գուզահեռ ու միշտ պարտադիր են:

Խաղի եվրոպական կանոնների արմատավորումը մեզանում մեծածավալ ու երկարատև ջանքեր են պահանջելու: Խնդիրն այստեղ ոչ թե իրենց արդյունավետությունն ապացուցած նորմերի մեխանիկական պատճենումն է, այլ դրանց արդյունավետ տեղայնացումը, դրանց իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդումն ու դրանց հանդեպ հասարակական վերաբերմունքի արմատական վերափոխումը: Յետևաբար անցումային այս ողջ գործընթացը մեզանում պահանջելու է լուրջ աշխատանք առնվազն վեց հիմնական ուղղություններով.

1. ադապտացիոն նմանակման ճանապարհով ՀՀ օրենսդրության համապատասխանեցում եվրոպականին,
2. անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում,
3. նոր օրենսդրության կենսագործունեությունն ապահովող ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանեցում,
4. կադրերի կրթման և վերապատրաստման աշխատանքներ,
5. ողջ գործընթացի ուղղորդում, մոնիտորինգ և կոորդինացում,

6. հասարակական/հոգեբանական վերափոխումներին ուղղված ջանքեր:

Եվ այսպես, ո՞րն է, ի վերջո, Եվրոպական ճանապարհը: Այն ամենօրյա հետևողական և ծանր աշխատանքի ճանապարհն է, հանրային նպատակադրման, ուժերի արդյունավետ համադրման, նախանձախնդիր ջանադրման ու վերափոխվել ցանկանալու ճանապարհն է: Այո՛, այն նաև ապագա բարեկեցիկ կյանքի ճանապարհն է, որ այսօրվա մեր հետևողականությունից է կախված:

## **«Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» (2010-2013թթ.)**

### **Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ՄՁՄԿ)**

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համագործակցությամբ և Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ իրականացնում է «Հայաստանում աշխատանքային միգրացիայի գիտավերլուծական կառավարման հզորացում» եռամյա ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանից դեպի Եվրոպական միության երկրներ աշխատանքային անկանոն միգրացիոն հոսքերի կառավարման գործընթացին: Այս նպատակին հասնելու համար ծրագրային միջոցառումներ են իրականացվում չորս հիմնական ուղղություններով. (I) Աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունների (ԱՏՄԳ) կարողությունների հզորացում, (II) Աշխատանքային շրջանառու (ցիրկուլյար) միգրացիայի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծում, (III) Միգրացիոն տվյալների հավաքագրման, վերլուծության և քաղաքականության մշակման ու իրագործման հարցում Հայաստանի շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում,



(IV) Միգրացիայի կառավարմանն առնչվող հայկական օրենսդրության համապատասխանեցում «ԵՄ acquis» օրենսդրական շրջանակին:

Շրագրի շրջանակներում աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ սերտ համագործակցության արդյունքում մշակվել է «Չբաղվածության գործակալություններին տեղեկատվական աջակցության համակարգը» (ՈւԼԻՍՍԵՍ), որը հնարավորություն է ընձեռում ՉԱՏԲ-երին հետևողականորեն և եվրոպական չափանիշներին հարիր ձևաչափերով ներկայացնել հայաստանյան աշխատուժը միջազգային աշխատաշուկայում, իսկ միգրացիայի ճանապարհը նախընտրած ՀՀ քաղաքացիներին՝ օգտվել զբաղվածության որակյալ ծառայություններից և խուսափել անկանոն միգրացիայի ռիսկերից: Համակարգի վերաբերյալ մանրամասներին կարելի է ծանոթանալ՝ այցելելով ՈւԼԻՍՍԵՍ տեղեկատվական հարթակի կայքէջ՝ <http://www.ulisses.am>; <http://platform.ulisses.am>:

*Կլոր սեղան քննարկում*



Գործակալությունների կարիքները վեր հանելու նպատակով իրականացվում են վերլուծություններ և հետազոտություններ, իսկ նրանց հմտությունների զարգացման գործընթացը խթանելու համար պարբերաբար կազմակերպվում են համաժողովներ, վերապատրաստման դասընթացներ և կլոր սեղաններ: Շրջանառու աշխատանքային միգրացիայի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ստեղ-

ծումը ենթադրում է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածություն: Մասնավորապես, միգրացիոն քաղաքականությունը մշակող պետական կառույցների և այդ քաղաքականության արդյունավետությունը գնահատող հասարակական կազմակերպությունների համար կազմակերպվում են համաժողովներ, առանց հղումների հանդիպումներ և մշակվում են քաղաքականության համառոտագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում մշակել շրջանառու աշխատանքային միգրացիայի վերաբերյալ փոխհամաձայնեցված հանրային դիսկուրս: Երկրում անկանոն միգրացիայի վտանգների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով մշակվել և հրատարակվել են Հայաստանից Շվեդիա, Լեհաստան, Ֆրանսիա, Գերմանիա և Սլովենիա մեկնող շրջանառու աշխատանքային միգրացիայի համար նախատեսված գործնական ուղեցույցեր, ինչպես նաև նկարահանվել են սոցիալական գովազդներ և վավերագրական ֆիլմեր, որոնք հեռարձակվում են հանրային հեռուստատեսությամբ:

## **«Եվրոպական ինտեգրում ամենամյա համաժողով 2012. Համընդհանուր եվրոպական արժեքներ՝ կյանքն առանց խտրականության»**

### **Մարդկային զարգացման միջազգային կենտրոն**

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄՉՄԿ) ՀԿ-ն Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության և «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի օժանդակությամբ 2012թ. նոյեմբերի 27-28 կազմակերպել էր «Եվրոպական ինտեգրում 2012. Համընդհանուր եվրոպական արժեքներ՝ կյանքն առանց խտրականության» խորագրով ամենամյա համաժողովը: Համաժողովի նպատակն էր նպաստել Արևելյան գործընկերության երկրներում եվրոպական արժեքների արմատավորման գործընթացին և խթանել քաղաքացիական հասա-

րակության, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների համապատասխան նախաձեռնություններին: Սա եվրոպական ինտեգրմանը նվիրված ՄՁՄԿ 7-րդ ամենամյա համաժողովն էր, որն ուրույն ամբիոն է դարձել Եվրոպական Միության հետ Հայաստանի Հանրապետության և Արևելյան գործընկերության մյուս երկրների ինտեգրման գործընթացի ընթացքը փորձագիտական հանրությանը և լայն հասարակությանը ներկայացնելու և առկա խնդիրները լուսաբանելու համար: 7 տարիների ընթացքում համաժողովին մասնակցել են Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ռուսաստանի, Դանիայի, Սլովենիայի, Շվեդիայի, Թուրքիայի, Գերմանիայի, Չեխիայի ինչպես նաև Եվրոպական և միջազգային կառույցների, այդ թվում՝ ԵՄ, ԵԱՀԿ և ՄԱԲՀ ներկայացուցիչները:

*Եվրոպական ինտեգրման կոնֆերանս 2012*



Նախորդ տարիներին Եվրոպական ինտեգրմանը վերաբերող ամենամյա համաժողովներ են կազմակերպվել հետևյալ թեմաներով՝

- 2006թ. - Եվրաինտեգրում՝ միասնական և խաղաղ հարևանություն ստեղծելու ճանապարհներն ու միջոցները,
- 2007թ. - Եվրոպական միությունը 50 տարեկան է. Ինտեգրման գործընթացը ԵՀԶ տարածաշրջանում. ՏԱՄԻՍ-ից դեպի Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (ԵՀԳԳ)

- 2008թ. - «Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագիրը 2 տարեկան Է. առաջընթաց, մարտահրավերներ և ապագա»
- 2009թ. - «Արևելյան գործընկերություն. արդյո՞ք այն նոր փուլ է ազդարարում եվրաինտեգրման գործընթացում»
- 2010թ. - «Եվրոպական հեռանկարները «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում և Հայաստան-Եվրոպական միություն Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների գործընթացում»
- 2011թ. - «Արևելյան գործընկերություն. Չարգացումների ներպետական և եվրոպական համատեքստը»
- 2012թ. - «Եվրոպական ինտեգրում 2012. Համընդհանուր եվրոպական արժեքներ՝ կյանքն առանց խտրականության»:

**«Ոչ-պետական դերակատարների կարողությունների ուժեղացում՝ բարեփոխումների խթանման և հանրային հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագիր (2012-2015թթ.)**

**Եվրոպական Ինտեգրացիա 34**

Ծրագիրը նախատեսված է Եվրամիության Արևելյան գործընկերության (ԱԷԳ) անդամ երկրների համար: Այն կոչված է հզորացնելու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներուժն ու կարողությունները, ինչպես նաև աջակցելու նրանց ընդգրկմանը քաղաքականության շուրջ երկխոսության (policy dialogue) մեջ: Նախատեսվում է, որ այս կերպ կընդլայնվի նրանց ներդրումը Եվրամիության գործընկեր երկրների քաղաքական և ինստիտուցիոնալ շրջանակներում:



Ծրագիրն իրականացվում է կոնսորցիումի կողմից, որը ղեկավարում է «Կոնրադ-Ադենաուեր Յիմնադրամը» որպես հիմնական դիմորդ, իսկ գործընկեր կազմակերպությունները ԱլԳ երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա) հասարակական կազմակերպություններն են:

Ծրագիրը կազմված է 5 բաղադրիչից՝

1. Քաղաքացիական հասարակության քարտեզագրում (Mapping) բոլոր ԱլԳ երկրներում,
2. Կարողությունների զարգացման գործողությունների կազմակերպում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար,
3. Աջակցության կենտրոնի (Help Desk) ստեղծում,
4. Հանդիպումներ և խորհրդատվություններ տարբեր շահագրգիռ կողմերի միջև,
5. «Քաղաքացիական հասարակության ծառայության» տեսանելիության ապահովում:

## **«ԱՐԼԵԼՅԱՆ գործընկերության երկրների և Եվրամիության միջև ազատ վիզային ռեժիմի ուղու հարթում» (2010-2011 թթ.)**

### **Մարդկային զարգացման միջազգային կենտրոն**

Շրագրի նպատակն էր վիզային ռեժիմի ազատականացման շուրջ համագործակցության ընդլայնման քաղաքականության շրջանակներում խթանել Արևելյան գործընկերության երկրների առավել սերտ ինտեգրումը ԵՄ անդամ պետություններին և առանձին մարդկանց միջև հաղորդակցումն ու միջազգային փոխանակումը:

Շրագրի ընթացքում ուսումնասիրվել է, թե ինչպես են կարծազանքում ԵՄ անդամ պետությունները վեց երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) հետ վիզային ռեժիմի հնարավոր ազատականացմանը: Բոլոր վեց երկրներում իրականացված ծրագրի հիմքում ընկած է եղել միևնույն առանցքային մեթոդաբանությունը, սակայն ընդունված է այն գաղափարը, որ նշված վեց երկրներից յուրաքանչյուրի դեպքում վիզային ռեժիմի ազատականացման համար պահանջվող ժամկետը տարբեր է:

Շրագրի իրագործման ընթացքում նշված բոլոր վեց ԱԳ անդամ երկրներում ներգրավվել են հետազոտողներ և փորձագետներ, որոնք քաջատեղյակ են ԵՄ նոր անդամ պետությունների և (կամ) ԵՄ հետ ազատ վիզային ռեժիմի անցած այլ երկրների (օրինակ՝ Արևմտյան Բալկանյան թերակղզու արևմտյան մասում գտնվող Խորվաթիա, Սերբիա, Չերնոգորիան և Մակեդոնիա) վիզային ռեժիմի ազատականացման գործընթացին: Հետազոտություն է անցկացնել Բրյուսելի մակարդակով, ինչպես նաև ԵՄ հիմնական անդամ պետություններում, որոնց մի մասը ջատագովում է վիզային ռեժիմի ազատականացման գործընթացը, իսկ մյուսը դեմ է այդ գործընթացին: Շրագրի մանրամասներին կարելի է ծանոթանալ <http://www.novisa.am/> կայքից:

**«Հավասար հնարավորություններ ազգային փոքրամասնությունների և խոցելի խմբերի մշակութային իրավունքների իրագործման համար. Հարստություն բազմազանության միջոցով» ծրագիր (2012-2014թթ.)**

**Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ (ՔՀՀՀ)**

Ծրագիրը իրականացվում է «ԳՈՒՐՏ» ռեսուրս կենտրոնի (Ուկրաինա), Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի և «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի (Հայաստան) կողմից՝ Եվրոպական Միության Արևելյան գործընկերության մշակութային ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

*Հարստություն բազմազանության միջոցով*



Հայաստանի և Ուկրաինայի գյուղական համայնքներում կարիք է զգացվում խթանելու մշակութային բազմազանության պահպանումը: Մարդիկ պետք է գիտակցեն իրենց մշակութային պահպանման նշանակությունը, ստանան գիտելիքներ իրենց մշակութային իրավունքների մասին, որպեսզի կարողանան մասնակցել համայնքի զարգացմանը: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել մշակութային բազմազան-

նության և ազգային փոքրամասնությունների մշակույթների պահպանմանը Հայաստանի և Ուկրաինայի 20 գյուղական համայնքների տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մշակութային հաստատությունների ղեկավարների կարողությունների հզորացման միջոցով: Հայաստանում ծրագիրն ընդգրկում է հետևյալ 10 համայնքները՝ Շամիրամ, Ռանչպար, Ճամբարակ, Մեծամոր, Լուկաշին, Ազատան, Մեծ Այրում, Աղավնավանք, Դիլիջան և Ալավերդի:

- Ծրագրի ընթացքում հաջողվել է ուենալ հետևյալ ձեռքբերումները՝
- Սեմինարների և թրեյնինգների կազմակերպում տեղական իշխանությունների, ՀԿ-ների և այլ հաստատությունների 120 ներկայացուցիչների համար,
- Մշակութային բազմազանության վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացմանն ուղղված արշավի նախաձեռնում,
- Ուկրաինայում և Հայաստանում ֆոտոմրցույթի կազմակերպում «Բազմազանությունը իմ համայնքում» թեմայով,
- Թվով 20 համայնքային զարգացման պլանների կազմում, որոնք ընդգրկում են ազգային փոքրամասնությունների մշակութային կարիքները
- Հետազայում նախատեսվում է՝
- Կազմակերպել այցելություններ դեպի Ուկրաինա և Լեհաստան՝ վերջիններիս փորձը և ունեցած հաջողությունները ուսումնասիրելու նպատակով,
- Ներկայացնել համայնքային նորարարական ծառայություններ: Մանրամասները՝ <http://governance.org.ua/cult/arm/>



# AEGEE-Երևան

## (Եվրոպական ուսանողների ֆորում/Association des Etats Généraux des Etudiants de l'Europe)

AEGEE-Երևանի հիմնադրման հիմնական նպատակն էր ակտիվացնել Հայաստանի դերը եվրոպական երիտասարդության շրջանում, տեղեկացնել հայ երիտասարդներին եվրոպական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մասին, նրանց հնարավորություն տալ ծանոթանալու տարբեր մշակույթների հետ, ինչպես նաև ուսումնասիրել Եվրոպայի լավագույն փորձն ու կիրառել այն Հայաստանում:

Վերջին տարիների ընթացքում AEGEE-Երևանը կազմակերպել է 40-ից ավել տեղական երիտասարդական ծրագրեր, որոնց մասնակցել են Հայաստանի տարբեր մարզերից ու Երևանից մոտ 2000 ուսանող և երիտասարդական ոլորտի ներկայացուցիչներ: Կազմակերպության բոլոր ծրագրերը հասանելի են երիտասարդության բոլոր շրջանակների համար և տարածվում են տեղեկատվության բոլոր հնարավոր ցանցերի միջոցով:

*Հայաստանում Եվրամիության մոդել 2012 խորհրդածրոյի մասնակիցներ*



Հատկապես նշանակալի են հետևյալ միջոցառումները.

«Եվրամիության իրազեկման օրեր» - այս ծրագրի նպատակն է իրազեկել երիտասարդներին Եվրամիության տարբեր կառույցներ

րի աշխատանքային գործունեության հետ, ինչպես նաև հանդիպել ՅՅ-ում Եվրամիության պատվիրակության ներկայացուցիչների հետ: Միջոցառման ընթացքում երիտասարդները կարողանում են իրենց անմիջական հարցերը բարձրաձայնել և ստանալ համապատասխան պատասխաններ: Հատուկ ուշադրություն է հատկացվում հատկապես այս միջոցառումների շարքին ոչ պրոֆիլային մասնագիտությունների տեր երիտասարդների ներգրավվմանը, դրանով իսկ փորձելով երիտասարդության ավելի լայն շերտերին հաղորդակից դարձնել ԵՄ ինստիտուտների աշխատանքներին: Միջոցառումների ավարտին ներկայացվում են Եվրամիության տարածքում առկա կրթական, կամավորական և գիտական ծրագրերը, որոնք հասանելի են նաև հայ երիտասարդներին: Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև մանրամասն տեղեկատվություն, թե ինչպես կարելի է ուսումը շարունակել եվրոպական լավագույն համալսարաններում և ինչպես ներգրավվել հասարակական ակտիվ գործունեության մեջ:

**«Հայաստանում Եվրամիության մոդել խորհրդաժողով»** - այս խորհրդաժողովը կազմակերպվում է հիմնադրումից ի վեր՝ ամեն տարի: Խորհրդաժողովին նախորդած շաբաթների ընթացքում միջոցառման մասնակիցները համապատասխան մասնագետների անմիջական օգնությամբ հնարավորություն են ստանում ուսումնասիրել Եվրոպական Միության Խորհրդարանի օրենսդրական ընթացակարգերը, ինչպես նաև ծանոթանում են եվրոպական ինտեգրացիայի և ընդլայման քաղաքականություններին: ԵՄ մոդելի նպատակն է խթանել քաղաքացիական ակտիվությունը և երիտասարդության շրջանակում բարելավել Եվրամիության մասին գիտելիքները:

Այս խոշոր ծրագրերին զուգընթաց, AEGEE-Երևանը կազմակերպում է նաև բազմաթիվ աշխատաժողովներ և կլոր-սեղան քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվում են բարձրագույն կրթությանը, երիտասարդության գործազրկության հաղթահարմանը, քաղաքացիական հասարակության և երիտասարդների ակտիվ քաղաքացիական ներգրավվածության ապահովման հիմնահարցերը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել՝ [www.ae-geeyerevan.am](http://www.ae-geeyerevan.am):

## **Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն (2009-2011 թթ.)**

### **Մարդկային զարգացման միջազգային կենտրոն**

2009թ. ապրիլին ձևավորված կոնսորցիումի շրջանակներում, ՄՁՄԿ-ն գործընկեր կազմակերպությունների (Այլթաիր Ասեսորզ (Իսպանիա)՝ կոնսորցիումի ղեկավար, Արևելք Արևմուտք Քընսայթինգ (EWC), Եվրոպական խորհրդատուների կազմակերպություն (ECO) և Եվրոպական սոցիալական, իրավական և տնտեսական ծրագրեր (ESTEP, Լիտվա) հետ համագործակցությամբ 2009-2011 թթ. իրականացրել է «Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն. փուլ 5-րդ» երկամյա ծրագիրը (AEPLAC V):

Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել ՀՀ հանրային կառավարման համակարգին՝ զարգացնելու Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ և Եվրոպական հարևանության քաղաքականության ԵՀՔ) գործողությունների ծրագիրն իրագործելու տևական կարողություններ՝ համագործակցելով ԵՄ խորհրդատվական խմբի հետ և առաջնորդվելով Հայաստանում ԵՄ պատվիրակության ուղեցույցներով:

AEPLAC V ծրագրի խնդիրներն էին՝

- աջակցել Հայաստանին՝ զարգացնելու ԳՀՀ և ԵՀՔ ԳԾ իրականացման միջոցով ԵՄ հետ ինտեգրումը խթանելու ուղղությամբ հանրային կառավարման մարմինների կարողությունները
- օժանդակել ԵՄ խորհրդատվական խմբին ԵՀՔ ԳԾ իրականացման ուղղությամբ ՀՀ պետական մարմիններին խորհրդատվության տրամադրման գործընթացում

- լուսաբանել և բարձրացնել հայ հասարակության տեղեկացվածությունը ԵՄ մասին:

*ԵՄ իրազեկման դասընթացներ երիտասարդների համար Երևանում և մարպերում*



AEPLAC V-ն գործունեությունն իրականացրել է երեք հիմնական ուղղություններով՝

*Առաջին.* աջակցություն է ցուցաբերել Հայաստանին՝ զարգացնելու հանրային կառավարման այն մարմինների կարողությունները, որոնք լիազորված են զբաղվելու ԵՄ հետ ինտեգրման հարցերով: Այս գործողությունը մշակվել և իրականացվել է ԵՄ խորհրդատվական խմբի հետ սերտ համագործակցությամբ: Նախապատրաստական փուլի ընթացքում կատարված մանրակրկիտ գնահատման, ինչպես նաև հիմնվելով ԵՄ և այլ դոնոր կազմակերպությունների կողմից նախկինում կատարված ուսումնասիրությունների վրա, Կոնսորցիումի գործընկերներն առաջարկներ են ներկայացրել հանրային կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման ու հզորացման ուղղությամբ, մշակվել է վերապատրաստման ծրագիր հանրային կառավարման առանձին մարմինների համար՝ ուղղված ԵՄ հետ ինտեգրման ուղղությամբ տևական կարողությունների զարգացմանը: Գործընկերները հայաստանյան իշխանությունների, Հայաստանում ԵՄ պատվիրակության և ԵՄ խորհրդատվական խմբի հետ սերտ համագործակցությամբ առաջարկել են ստեղծել ՀՀ վարչապետի աշխատակազմին կից կամ

ՀՀ վարչապետին անմիջականորեն հաշվետու միավոր, որը կգարգացնի բարեփոխումներ մշակելու և իրականացնելու ՀՀ կառավարության ռազմավարական ունակությունները:

Գործընկերները կազմակերպել են նաև վերապատրաստման ծրագրերում նախանշված դասընթացներն ու ուսուցողական այցելությունները, որոնց ընթացքում մասնակիցներին ներկայացվել են ԵՄ կամ Ե-ՅԲ շրջանակներում ընդգրկված այլ երկրների փորձը և միջոցներ են ձեռնարկվել ԵՄ ֆինանսական օժանդակությամբ իրականացվող այլ ծրագրերի ջանքերն ու գործիքների (TAIEX, SIGMA) հնարավորությունները միավորելու ուղղությամբ:

*Երկրորդ.* AEPLAC V-ը իրականացրել է ԵՄ լուսաբանում Երևանում և մարզերում: Կոնսորցիումի գործընկերները մշակել են աշխատանքային ծրագիր՝ ուղղված Հայաստանում ԵՄ մասին տեղեկացվածության բարձրացմանը: Գործընկերների կողմից տրամադրվել են ԵՄ անդամ, անդամության թեկնածու և Ե-ՅԲ երկրների հաջողված փորձն ու այդ երկրներում իրականացված գործընթացից բաղված դասերը:

*Երրորդ.* AEPLAC V-ի միջոցով գործընկերները, Հայաստանում ԵՄ պատվիրակության հանձնարարությամբ, մասնագիտական աջակցություն են ցուցաբերել ԵՄ Խորհրդատվական խմբին՝ նրանց կարիքներին համապատասխան:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ <http://www.ichd.org> կայքից

## **Միգրացիա և բարձրագույն կրթություն. հմտությունների և կարողությունների զարգացում (2011-2014 թթ.)**

### **Հայաստանում Տեմպուս ծրագրի ազգային գրասենյակ**

Ծրագրի գլխավոր նպատակն է փոխանցել միգրացիայի միջոցից կալիսար հմտություններն ու ունակությունները Եվրոպական

հարևանության քաղաքականության գործիքի (ԵՀԶԳ) արևյան տարածաշրջան, մասնավորապես՝ Հայաստան, Ադրբեջան և Վրաստան:

Ծրագրի հատուկ նպատակներն են՝

1. Բոլոնիայի պահանջներին համահունչ, տարածաշրջանային հարթության ներքո մշակել, հավատարմագրել և կիրառել Միգրացիոն ուսումնասիրություններ մագիստրոսական ծրագրի հիմնական ուսումնական ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի վեց համալսարաններում: Ուսումնական ծրագիրը՝ մշակված ԵՄ գործընկերների և Գործընկեր երկրների հաստատությունների հետ համատեղ, այնուհետև կադապտացվի յուրաքանչյուր Գործընկեր երկրի/համալսարանի հատուկ կարիքներին: Համատեղ ուսումնական ծրագիրը պետք է ծառայի որպես ամուր հիմք գործընկեր հաստատությունների միջև հետագա համագործակցության համար: Նախատեսվում է նաև աստիճանների փոխադարձ ճանաչում և, նույնիսկ, համատեղ ծրագրերի իրականացում:
2. Ազգային միգրացիոն կոմպետենցիայի կենտրոնների (որպես ինտեգրված համասալսարանական ստորաբաժանումներ Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում, Վրաստան, Երևանի պետական համալսարանում, Հայաստան և Խազար համալսարանում, Ադրբեջան) և Տարածաշրջանային հետազոտական ցանցի հաստատմամբ հիմնադրել կայուն կառույցներ, որոնք ծառայում են որպես ընդհանուր սահման համալսարանների, հետազոտական և պետական հաստատությունների, կառավարությունների և հասարակության միջև:

Վեբկայք՝ [www.unimig.tsu.edu.ge](http://www.unimig.tsu.edu.ge), [www.mcc.yasu.am](http://www.mcc.yasu.am)

# **Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման և համադրելիության խթանումը (2010-2013 թթ.)**

## **Հայաստանում Տեմպուս ծրագրի ազգային գրասենյակ**

Ծրագրի գլխավոր նպատակն է պարբերաբար բարելավել բարձրագույն կրթության որակը Հայաստանում և Վրաստանում և նպաստել կամավոր կոնվերգենցիային ԵՄ զարգացումներին համընթաց:

Ծրագրի նպատակն է Գործընկեր երկրներում (Հայաստան և Վրաստան) մշակել նոր և տեղայնացնել արդեն գոյություն ունեցող բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համակարգերի մոդելները, որոնք ընդունելի են և համեմատելի տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Գործընկեր երկրներում կմշակվեն բուհերի արտաքին և ներքին որակի կոմպետենցիաները՝ նախապատրաստելու իրենց իսկ մեթոդների ու գործիքների կիրառմանը: Ծրագիրը նաև հնարավորություն կընձեռի Հայաստանի և Վրաստանի և՛ բուհերի, և՛ գործակալությունների համապատասխան դերակատարներին ուսումնասիրելու որակի ապահովման միջոցների հաջողության վրա ազդող մշակութային և վարքագծային պարամետրերը: Կիրախուսվի երկխոսությունը բարձրագույն ուսումնական համակարգերի շահակիցների միջև թե՛ ազգային մակարդակում, թե՛ դրանից դուրս: Կսահմանվի ռազմավարություն՝ երկրի և տարածաշրջանային մակարդակում ծրագրի արդյունքների իրականացման համար: Ծրագրի ընթացքում համակարգի ընթացիկ բարելավման համար կիրառվող հետադարձ կապի հանգույցները ինքնին նախատեսված են հսկելու այդ համակարգի արդիականությունը և կիրառելիությունը:

Վեբկայք՝ [www.picqa.org](http://www.picqa.org)

**Ուղղել համալսարան-ձեռնարկություն  
համագործակցությունը դեպի  
կոմպետենցիաների վրա հիմնված  
վերապատրաստումներ Հայաստանում,  
Վրաստանում և Ուկրաինայում  
(2011-2014 թթ.)**

**Հայաստանում Տենպուս ծրագրի ազգային գրասենյակ**

Ծրագիրն ուղղված է ԵՅԶԳ արևելյան տարածաշրջանում կրթական, տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումների անցկացմանը:

Ծրագրի գլխավոր նպատակն է ուղղել Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի համալսարանների կարողությունները դեպի գիտելիքների վրա հիմնված հասարակություն և շուկայական տնտեսություն:

*Ծրագրի 3-րդ համակարգման հանդիպում Գրենորթի ակադեմիայում,  
2012 թ. դեկտեմբերի 19-21*



Թիրախակետին հասնելու համար հարկավոր է իրագործել հետևյալը՝

1. Համապատասխանեցնել բարձրագույն կրթությունը շուկայական տնտեսության փոփոխվող պահանջներին:



2. Բարեփոխել համալսարանական կառավարումը՝ խթանելու կայուն համագործակցություն ձեռնարկությունների լայն շրջանակի հետ:
3. Բարձրացնել հասարակության լայն շերտերի իրազեկության մակարդակը համալսարան-ձեռնարկություն համագործակցության շուրջ:
4. Նախագծվել են մի շարք աշխատանքային փաթեթներ և դրանց առնչվող գործողություններ՝ գլխավոր արդյունքներին հասնելու նպատակով:

Որպես կայուն գործընկերության մոդել՝ կուրվագծվեն ձեռնարկությունների հետ գործընկերության կենտրոնների կառուցվածքը, կառավարումն ու մասշտաբները՝ հիմնվելով ԵՄ համալսարան-ձեռնարկություն համագործակցության լավագույն փորձի վրա: Կենտրոններ կհաստատվեն 3 թիրախային երկրների՝ Յայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի 7 համալսարաններում և ապահովված կլինեն վերապատրաստված անձնակազմով, ռեսուրսներով, բիզնես նախագծերով, զարգացման ռազմավարությամբ և սարքավորված բիզնես զարգացման լաբորատորիաներով:

Կարողությունների վրա հիմնված դասընթացների մեթոդոլոգիան կներդրվի Յայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի 7 համալսարաններում, և այս գործընթացը կուղեկցվի տեղեկատվության տարածման ակտիվ գործունեությամբ՝ բարձրացնելու իրազեկությունը Յայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում բարձրագույն կրթություն-արդյունաբերություն գործընկերության կարևորության շուրջ:

Մշակված առաջարկությունները, մի շարք տեղեկատվական և ուսուցողական նյութեր հասանելի կլինեն առցանց:

Կկազմակերպվեն սեմինարներ, աշխատաժողովներ, խորհրդաժողով՝ թիրախային երկրների մոդելի և աշխատանքային մեթոդոլոգիայի ավելի լայն տարածման համար:

Վեբկայք՝ [www.cap4com.eu](http://www.cap4com.eu)

# **Մարդու Իրավունքներ եւ Ժողովրդավարացում» միջմասնագիտական տարծաշրջանային մագիստրոսական ծրագիր**

## **Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն**

2010թ. Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը հիմնադրել է «Մարդու Իրավունքներ եւ Ժողովրդավարացում» միջմասնագիտական տարծաշրջանային մագիստրոսական ծրագիր: Ծրագիրը գործում է Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի աջակցությամբ: Այն Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ հիմնադրված տարածաշրջանային 6 «Մարդու Իրավունքներ եւ Ժողովրդավարացում» մագիստրոսական ծրագրերից մեկն է: Մագիստրոսական ծրագիրը իրականացվում է 2011թ. սեպտեմբերից Կիևի Տարաս Շևչենկոյի անվան ազգային, Բելառուսի պետական, Մոլդովայի եվրոպական քաղաքական և տնտեսական հետազոտությունների համալսարանների հետ: Սույ մագիստրոսական ծրագիրը գործում է Վենետիկի Եվրոպական միջհամալսարանական կենտրոնի հետ համագործակցությամբ:

2013-2014թ. ակադեմիական տարվանից սկսած «Մարդու Իրավունքներ եւ Ժողովրդավարացում» միջմասնագիտական տարծաշրջանային մագիստրոսական ծրագիրը կգործի մեկ տարով:

Մագիստրոսական ծրագիրը ուսանողներին տալիս է խորը գիտելիքներ մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ոլորտներում: Այն ընդգրկում է դասախոսների եւ ուսանողների փոխանակում, ուսումնական այցեր ԵՄ ինստիտուտներ եւ պրակտիկա մասնակից երկրներում:

Ծրագրի մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել ծրագրի կայքում [\*\*www.regionalmaster.net\*\*](http://www.regionalmaster.net)

# ԵՄ ավտոբուս

## Հայաստանում ԵՄ կենտրոն

Հայաստանում ԵՄ կենտրոնը 2013 թվականի մայիսից նախաձեռնել է ԵՄ ավտոբուսի շրջայցեր Հայաստանի տարբեր մարզեր: ԵՄ ավտոբուսի առաջին շրջայցն այս տարվա մայիսին էր, երբ ԵՄ ավտոբուսը այցելեց Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի գյուղեր ու քաղաքներ: ԵՄ ավտոբուսի երկրորդ շրջայցը մեկնարկեց սեպտեմբերի 18-ին: Այս անգամ ԵՄ ավտոբուսն այցելեց Գեղարքունիքի և Արարատի մարզերի գյուղեր ու քաղաքներ: ԵՄ ավտոբուսը կրկին ճանապարհին կլինի 2014 թ.-ի գարնանը՝ Հայաստանի մնացյալ մարզերի գյուղեր ու քաղաքներ այցելելու նպատակով:

*ԵՄ ավտոբուսը Հայաստանի մարզերում*



ԵՄ ավտոբուսն իր շրջայցերով մայրաքաղաքի և մարզերի ավագ դպրոցների ու բուհերի աշակերտներին և ուսանողներին, քաղաքացիական հասարակության, տեղական իշխանությունների և համայնքների ներկայացուցիչներին, երիտասարդներին, ուսուցիչներին, դասախոսներին և ընդհանուր առմամբ հանրությանն առաջարկում է ավելին սովորել Եվրոպական միության մասին՝ տեղեկատվա-

կան նյութերի, ծրագրերի ներկայացումների, հարցաշարերի, խաղերի միջոցով:

ԵՄ ավտոբուսի շրջայցերի ընթացքում կազմակերպվում են ԵՄ պատվիրակության ներկայացուցիչների դասախոսություններ, հանդիպումներ մարզերի ուսանողների և ավագ դպրոցների աշակերտների հետ, ներկայացվում են տվյալ մարզում գործող ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերը, դասընթացներ ու աշխատանքային հանդիպումներ են կազմակերպվում ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասնակցությամբ, բաժանվում են տեղեկատվական նյութեր, նաև հարցաշար՝ ԵՄ մասին հրացադրումներով:

Մանրամասները՝ <http://eucentre.am/>

## **Եվրոպայի օր**

### **Յայաստանում ԵՄ պատվիրակություն**

Եվրոպայի օրն ամենամյա միջոցառում է, որը կազմակերպվում է Յայաստանում ԵՄ պատվիրակության կողմից՝ Եվրամիության և նրա հարևան երկրների միջև առավել սերտ կապեր հաստատելու համար: Եվրոպայի օրվա ամենամյա տոնակատարությունները ներառում են մի քանի օր տևող տեղեկատվական իրադարձություններ, որոնց ընթացքում ներկայացվում է ԵՄ-Յայաստան համագործակցությունը և եվրոպական մշակույթի բազմազանությունը:



Վերջին տարիներին կարծես ավանդույթ է դարձել Եվրոպայի օրվա հիմնական տոնակատարությունը մեկնարկել դասական համերգով: Այս համերգների շրջանակներում ԵՄ Պատվիրակությունը համագործակցել է հայաստանյան տարբեր նվազախմբերի հետ:

2013թ. Եվրոպայի օրվան նվիրված տեղեկատվական ցուցահանդեսը ներառում էր առավոտյան հանդիպում՝ կլոր սեղան, որին մասնակցում էին ԵՄ պատվիրակության ներկայացուցիչները և ԵՄ անդամ պետությունների դեսպանները:

Օրվա հիմնական առանցքն էր կազմում տեղեկատվական ցուցահանդեսը, որի այցելուները ծանոթացան ԵՄ օժանդակությամբ իրականացվող շուրջ 70 ծրագրերի և նախագծերի, որոնք գործում են տարբեր ոլորտներում՝ կրթություն, աղքատության նվազեցում, առևտուր, երիտասարդական ծրագրեր, մշակույթ, բնապահպանություն, միգրացիա և այլն: Մշակութային միջոցառումների շրջանակում ներկայացվեցին Հունաստանը, Իսպանիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Գերմանիան, Ռումինիան Միացյալ Թագավորությունը և Իտալիան: Անցկացվեցին ձեռքի աշխատանքների և վարպետության դասեր, որոնք ուղեկցվում էին երաժշտական և պարային համարներով: Եվրոպայի օրվա տոնակատարությունը Երևանում ամփոփվեց համերգային ծրագրով: Ելույթ

ունեցան երաժիշտեր ինչպես Չայաստանից, այնպես էլ հյուրեր արտասահմանից՝ Գերմանիայից և Ռուսիայից:

Եվրոպական գրական հանդիպումներ անցկացվեցին նաև ԵՄ կենտրոնում և Մետրոյի տարբեր կայարաններում:

Մանրամասները՝ <http://europeinarmenia.wordpress.com/>



Գրքույկում ամփոփված են Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացի աջակցմանը միտված ծրագրեր, միջոցառումներ և գործողություններ, որոնք իրականացվում են հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Այս գրքույկը «Քաղաքացիական հասարակության դերը ԵՄ ինտեգրման գործընթացում. իրական ներգրավվածություն արդյունավետ մասնակցության միջոցով» հրատարակության մասն է, որը նմանօրինակ տեղեկատվություն է ներկայացնում նաև ուկրաինական և վրացական փորձի վերաբերյալ:

Գրքույկների այս շարքը պատրաստված է «Քաղաքացիական հասարակության դերը ԵՄ ինտեգրման գործընթացում. իրական ներգրավվածություն արդյունավետ մասնակցության միջոցով» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացնում է Վիշեգրայի հիմնադրամի առակցությամբ:

Գրքույկը մշակվել և պատրաստվել է հրատարակության Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից: